ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 31-Լ

«26» 02 2024 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, 15-րդ հոդվածի 4-րդ մասով, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2022 թվականի հունիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Հրամանի N 2 հավելվածի 2-րդ գլուխը լրացնել նոր 4.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող 2»:

2) Հրամանի N 2 հավելվածի 2-րդ գլխի վերջին տողում «Ընդամենը 10» բառերը փոխարինել «Ընդամենը 12» բառերով:

3) Հրամանի N 2 հավելված 25-րդ գլխի վերջին տողում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 134» բառերով:

4) Հրամանի N 2 հավելվածի 4-րդ բաժնի 51-րդ գլխի 200-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

5) Հրամանի N 2 հավելվածի 4-րդ բաժնի 51-րդ գլխում՝ 200-րդ կետին հաջորդող տողերում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ 2» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 5» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4» բառերով:

6) Հրամանի N 2 հավելվածի 52-րդ գլխի վերջին տողում «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 53» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 52» բառերով:

7) Հրամանի N 2 հավելվածի 5-րդ բաժնում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 132» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 134» բառերով, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 53» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում՝ 52» բառերով:

8) Հրամանի N 3 հավելվածի 3-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 5» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 4» բառերով:

7) Հրամանի N 3 հավելվածի 3-րդ կետին հաջորդող տողում «ԸՆԴԱՄԵՆԸ՝ 15» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ 14» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ
ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. Կ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**